ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

0010, ք.Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 3
www.minurban.am, E-mail: info@minurban.am

01.03.16թ. N 02/20/991-16

Ինֆորմացիայի ազատության կենտրոն
հասարակական կազմակերպության նախագահ
տիկին Լիանա ԴՈՅԴՈՅԱՆԻՆ

Հարգելի տիկին Դոյդոյան

Ի պատասխան Ձեր 2016 թվականի փետրվարի 23-ի N 269-ի 1 գրության հայտնում եմ.

Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարությունում 2016 թվականի հունվարի 1-ից մինչ օրս ստացվել է թվով 21 հարցում, որոնց տրվել է գրավոր պատասխան: Ստացված հարցումների վերահասցեագրում չի եղել, բանավոր պատասխան տրվել է միայն բանավոր հարցումներին, որոնք բազմաթիվ են (գրավոր տրված պատասխանների մեջ ներառված չեն ֆեյսբուքյան հարցումներն ու դրանց պատասխանները, որոնք ևս բազմաթիվ են):

Նշեմ, որ Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարության www.minurban.am պաշտոնական կայքում ստեղծված է համապատասխան պատուհան, որը հնարավորություն է տալիս առցանց դիմել նախարարություն (տես հղումը՝ http://minurban.am/am/feedback):

Նախարարության պաշտոնական կայքում առկա է «հաճախ տրվող հարցեր» պատուհանը, որտեղ պարբերաբար տեղադրվում են այն հարցերն ու պատասխանները, որոնք հաճախ են բարձրացվում քաղաքացիների ու կազմակերպությունների կողմից (տես հղումը՝ http://minurban.am/am/info/faq):

Հարգանքով՝

Էդգար ԳԵՎՈՐԳՅԱՆ

Տեղեկատվության և հասարակայնության
հետ կապերի բաժին
Հասմիկ Պետրոսյան
Հեռ. 011-621-711